

Ամբաստանապետ
 Ներքազմաբան «Փիիկ»-ի
 Ապետանդրիա



S. Bural
 Rédaction «PUNIG»
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏՍՈՍՈՒՄ

Չր. 45
 ՏԱՐԵԿԱՆ... 25
 ՎԵՑԱՄՈՒՆԱՅ

Չր. 15
 ՏԱՐԵԿԱՆ... 8
 ՎԵՑԱՄՈՒՆԱՅ

Փիիկ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
 ԿԱՆՈՒԿ Է
 Ձեռագիր եւ չ'դարձուի

ԿՈՎԿԱՍ
 ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6
 Ազդե կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

Կը ծախուի ՄԷՆ ԿՐՈՇ ԵՂՅԻ

ՆԱԲԱՐԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

17 ՅՈՒՆՎԱՐ 1903

ԹԻԻ 23

Փիիկ
 ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ
 Շ. Ն. Տ. 114 Յունվար 1903

Հրապարակաւ կը յայտնենք մեր փոխադարձ ինդակցութիւններն ու երջանիկ տարիներ կը մաղթենք այն ամեն հեռաւոր ու մտաւոր բարեկամներուն որոնք իրենց այցաբարտը զրկած էին մեզի Ամանորին առիթովը:

ՉՐԻԱԿԵՐՆԵՐԸ

Թող չը ինդան որ այս անգամ չը հրատարակեցինք իրենց անունները. այս բազմաւորութիւններն կը պարտին տեղին անձկութեանն ու նիւթերուն ուստութեանը:

Եթէ դեռ այսպէս յամառին չը վճարիլ իրենց պարտքը, պիտի պարտաւորինք հրատարակել ՄԱՍՆԱԻՈՐ ԹԻԻ ՄԸ, այս լէգէճներն անունները միայն պարունակող:—

Թուրքիոյ կամ Ռուսիոյ գրաքննութեան քանգիչ դերը ստանձնած են արտասահմանի մէջ մեր այս կարգի ճիւղախերճերը, որոնք անտեսապէս կը հալածեն, կը կեղեքեն և ի վերջոյ կը խափանեն թերթին հրատարակութիւնը:

Արոնք են մամուլին մահաց ու թըշնամիները, մթնոլորտն ապակառուցիները, հրապարակը թունաւորողները...:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՄԸ

(1902-1903)

Այլազեան Յովակի եպիսկոպոսին աչքը լնայ, այս տարին ալ բողոքեց Ազգայնագրիոյ հասարակութիւնը, որ անց դէպ լու իր «ստանցեւորական» ինքնատուրքակաւ անբողոքեանը:

Փոթորկալից տարի մը սակայն վերջացող տարին, մասնաւորապէս մեր տեղական ազգային կեանքին համար. ամուլ վէճերու, կուսակցական կիրքերու պռութկումին, հին ու նոր գլուխներու ընդհարումներուն, տապալումներու, կանգնումներու, ցոյցի, միմիկի, հանրադրի ու հակահանրադրի, ընկերութեանց կազմութեանց ու կազմալուծումներու, տիտղոսներու տարափի, են տարի մը սա 1902ը, մեր Աղեքսանդրիացիներուն համար: Սակայն, ինչպէս նախորդ, նոյնպէս այս տարուան ալ հաշուեկշիւը չը տեսնաք կախում կամ փակցում եկեղեցիին կամ առաջնորդարանին պատը, ուր, վերջերս մանաւանդ, առիթ ունեցանք տեսնելու շատ մ'անպէտ ու անօգուտ ազգեր: Ո՛չ միայն Կ. Պոլսոյ, ո՛չ միայն Իզմիրի, այլ և դաւառներուն, նոյնիսկ աննշան դիւղաքաղաքի մը մէջ հայ ժողովուրդին աչքը վարժուած է դոնէ տարին անգամ մը կարդալ տեղին ազգ. վարչութեան կամ Թաղ. Խորհուրդին պաշտօնավարութեան տեղեկագիրն ու հաշուեկշիւը. մինչքեւ Աղեքսանդրիոյ հասարակութիւնը, Առաջնորդ կոչուած եպիսկոպոսին Ն. դիպտոս ոռք կոխած օրէն մինչև այսօր չէ՛ տեսած ատանկ բան մը. բնաւ տեղեկութիւն չ'ունի թէ՛ տաշուէ տարի ո՛րքան հասոյթ կը բերեն այն կալուածները գոնէ, որոնք դեռ զերծ կը ման ծախուելէ, թէ ո՛րքան կը ծախսուի եկեղեցիին ու պաշտօնեաներուն համար, ո՛րքան՝ երկ. վարժարանին և ո՛րքան՝ աղքատներուն համար:

Եւ որովհետև այս տարին ալ վերջացաւ ու դարձեալ մենք չը տեսնաք այդ հաշուեկշիւը, գոնէ մամուլին կողմէն մե՛նք ներկայենք մասնաւորապէս Աղեքսանդրիոյ հասարակութեան և ընդհանրապէս հայ ազգին համար, Աղեքսանդրիա ժամանակ անցընող Գա-

հիրէի Առաջնորդին, ըսել կուզենք Յովսէփ Եպիս. Այլազեանին գործունէութեան հաշուեկշիւը 1902-1903:

Թերթը փոքրիկ, նիւթերը մեծ ու առատ. խոտայնե՛նք սրբեմն այդ հրակայ գործունէութիւնն ու միայն խոշոր գիծերը դնենք հոս:

1902 Յունվարին մէջ խեղճ առաջնորդը կը տառապի միզարգելութենէ, Տօղթ. Թէօֆիլ կը փութայ դէպքին վայրը, տեղական օտար թերթերու մէջ գրեթէ ամեն օր վիճակացոյցը կը հրատարակուի, վայրկենէ վայրկեան տխուր զօղանջը կը սպասուի եկեղեցիին զանգակին:

Պատրա՛նք, հաճելի՛ պատրանք. Սրբազանը կ'այաբինի, նոյն շաբթուան հարսնիքի մը կը նախագահէ, Ազնուաշուքի մը հաշմնիքին:

Յոնվարի 22ին, նոր Թաղ. Խորհուրդի մ'ընտրութեան համար Ընտրող ժողով մը կը կազմուի և ընտրելիներու եռապատիկ անուններու ցա՛նկ մը կը պատրաստուի:

Արագ աշագ կ'երթան գործերը. Փետրուարին ընտրութեանց հրաւէր, Մարտին քուէներու հաւաքում, 23ին ընտրութիւնները կը կատարուին. պատմական օրը ծափերուն, կեցցէներուն, տապանակին, պառալ կանչելուն, խաղալ պարելուն զիշերը:

Բայց Տեղեկագիրը պիտի ստորագրուի, ճեպընթացով Գահիրէ կը ղըրկուի ստորագրուելու համար... Վսեմ. Պօղոս բաշայէն:

Ու ... կը ստորագրուի.

Բայց ... կը բողբուի:

Ապրիլ մտանք. եպիսկոպոսը Ս. Պօղոս Պետրոսի խորանէն կը խօսի, բեմէն կ'օրհնէ նորընտիր Խորհուրդը, նսիկիները գետնէ գետին կը զարնէ, ընտրուածները չե՛մ գիտեր քանի՛ երրորդ երկինքը կը հանէ. Սահմանադրական ու օրինաւոր կը հռչակէ նոր Խորհուրդը, հռչակաւոր քարոզով մը,

որուն մէջ ճկուն «Յեղա՛յ» մը կ'արտասանէ, անցած տխուր միջադէպերուն առթիւ. ա՛լ ամեն բան ընցած է, ուստի բոլոր բեռը կը դնէ խեղճ Ռէիզեան Կարապետ պէյին վրայ. ա՛ն է որ 1901 Սեպտ. 1ին, եկեղեցին բերել մտցընել է տուեր լրահանէրը. ինք արդէն օրէնքին, սահմանադրութեան գործադրութեան ամենաշերտ պաշտպանն է եղել, ևն:

Չատկական զուարթ օրերը կը մտնեն. Ապրիլ 13ին, կիրակի կէս օրէն ետքը ժամը 4ին, Կորընտիրը կը բանայ իր անդրանիկ նիստը, պաշտօնաբաշխումը կը կատարուի. Ատենապետը, Փոխ.ը, Գանձապետը, Դպիրը, ամենքն ալ կ'անտանուին. գործը յաջող է, քաղաքը խաղի խնջոյքի մէջ է:

Օդը կը փոխուի յանկարծ, Մարտի փոփոխական օդերը կարծես կը վերադառնան. Այվազեան մեքենան՝ մեքենագէտ վարչի մը ձեռքին մէջը կը դառնայ ու կը դառնայ զարմանալի արագութեամբ:

— Էքիզէրը չըլլար.

— Ինչո՞ւ:

— Մի՛ հարցընէք.

— Ո՞վ չ'ուզեր որ.

— Մի՛ հարցընէք:

Ու կուգայ կը հասնի Մայիսի 6ը. հեռագիր մը Պոլիս, Օրմանեան Պատրիարքին.

«Նորնիսիրներուն մեծանասնորիւնը հրաժարեցաւ, պէտ է լուծել Խորհուրդը.»

Յովսէփ Եպիսկոպոս

Գանի որ ասանկ է, լուծեցէ՛ք,

Մաղափա Պատրիարք

Ուստի Մայիս 12ին կը լուծուի Թաղ. Խորհուրդը, որ դեռ մեկ երկու շաբաթ առաջ, օրինաւոր, սահմանադրական, ևն, հռչակուած էր բեմէն օրհնութիւն թափող բերնով մը:

Էքիզէրը դուրս կը մնայ, հետն ալ Մութաֆեանցը, երկուքն ալ ըստուարաթիւ քուէներով ընտրուածներ:

Այս երկուքը կը բողոքեն պաշտօնապէս, ու կը բողոքեն հրապարակով, թէ՛ հոս թէ՛ ի Պոլիս:

Ինչ օգուտ. մեքենան կը ցառնայ ու կը դառնայ, ամիսը կը յաշորդէ ամսուան, գէպքերը կը յաշորդեն գէպքերու, բայց մէկը չը յաշորդեր եպիսկոպոսին, որ առկէ Դահիրէ. անկէ հոս, ասկէ հոն, ճեպընթ ցի առաջինով կ'երթեն. . . . Ա՛լ ի՞նչ ընէր:

Մայիս 18ի կիրակին Անկիցի Խնամակալորիւնը՝ կ'ազազակէ ժողովուրդը, խնամակալները կը յուզուին, պետը կը զայրանայ, առաջնորդը կը յիշէ իր հին արուեստը. մատնացոյց կընէ տեղական կառավարութեան կէս երկվեցեակ ցուցարար, իրրե խռովարարներ. Օրմանեանին ալ մասնաւոր, մտերմական նամակով կը հաղորդէ գէպքը, խեղաթիւրուած, ցուցարարները ներկայուած իրր յեղափոխականներ ու կարգաւ յիշուած իրենց անուններով:

Խնամակալութիւնը Սակարանին ժամացոյցին պէս կը բանի. Մայիս 18 ի ցոյցին գէմ ա՛ն քեզի Մայիս 25 ի անմոռանալի խեղկատակութիւնը, Դամսրզներու, Դուչհիներու, Մեռոնսրզներու շոգելից կեցցէներովը գահը կը բազմի խնամակալութիւն Ինքնակալը, մինչդեռ նոյն օրը, առտուն կանուխ կառավարչատունը կը կանչուին եպիսկոպոսին մատնած անձերը, որոնք անմիջապէս կը վերադառնան:

Խաղթութիւնը զենիթն է, ժողովուրդը կ'ամբոխի: Յունիս 23ին Միթինկը կը գումարուի, 600 ներկաներու առջեւ կը կարդացուի որոշմագիրը, որ միաձայնութեամբ կ'ընդունուի. հոն հրապարակաւ կը յայտարարուի թէ՛ Խնամակալութիւնը գոյութիւն չ'ունի օրէնքին առջև. թէ՛ պէտք է

լուծել զայն անմիջապէս, բառնալ կամայականութիւնը, գործարքել Սահմանագրութիւնը:

Մեծ դէպք մըն ալ Պրուսէի գօնկրէին առիթովը գումարուած Միթինկը, Յուլիսի 16ին, նախագահութեամբ Թուռնուզի քաջարի Բարթուղիմէոս վարդապետին, որուն, ի պատիժ իր նախագահելուն, նիհար ամսաթոշակը, այսինքն ապրիլու միակ միջոցը կը կտրուի քիչ յետոյ, թեւադրութեամբ ու ստիպումովը Գրան հաւատարիմ Յովսէփ եպիսկոպոսին, ահարեկելու, անօթի մեռցընելու մտքով՝ իրեն պէս չը մտածողները կամ չը զգացողները, ու, աւելին կայ, խլելու յուսովը մէծիախէի կտոր մը:

Օգոստոսին դպրոցական արձակուրդը վրայ կը հասնի, բայց մեր եպիսկոպոսը դուր ու գաղար չը գիտեր, կը գործէ. շնորհիւ իր աշակուղ հայրու թեան, հօտէն ոչխար մը կը կորսուի. Արլու ման Տէմիրեան մը կ'իսլամանայ. Օգոստ. 10ին խուճը մը երկտասարդներ կը ներկայանան Սըրբազանին. աղէր տեսակցութիւն. . . .

Արդեօք այդ հաւատուրաց Արլու մանին պակասը լեցնելու թէ ողբացեալ Տ. Եզնիկ Պաշտօնին դառն կորուստը դարմանելու ջերմ եռանդէն մղուած, կամ արդեօք միանուագ կըրթիլ գումարիկ մը դրոպանելու տենդէն բռնուած՝ մեր գործօն, ու խօհեմ եպիսկոպոսը թեւազրեց մեր եկեղեցիին լուսարարապետ Տիրացու Միհրան Ղազարոսեանին և անոր տուն շարկեց քահանայութիւնը. — Երկուքին միջև դարձած բան մը:

Դարձեալ իրարանցում, բերանացի, գրաւոր բողոքներ, ցոյց:

1901 Սեպտ. 1ին, գաղտնի ստիկաններ մտան եկեղեցիին. իսկ, Հոկտեմբեր 18ին գիշերը, բռնի ձեռնադրութիւն մը քալեցնելու համար միայն՝ զոյգ զոյգ հեծեալ զօրքեր ներս

խուժեցին շրջափակէն, զօրքեր մտան տաճարը, դասը, քիչ մնաց որ խորանը շարուէին:

Սհագին աղմուկներ, ձերբակալումներ ու յետոյ վերջին Միթինկը սրուն մէջ կ'ուշուի Առաջնորդին պաշտօնակալուն ու Չեռնադրութեան խաչաւորները:

Քաղաքիս կառավարչին ու Օրմանեան Պատրիարքին կ'ուղղուի զտա զատ հանրագրութիւն, նոյն իմաստով ձեռնադրութիւնը կ'արգիլուի. իսկ գործունեայ ու խօհեմ եպիսկոպոսը ձեպքն թացով կը վազէ Գահիրէ, ներքին գործերու նախարարին դուռը կ'սրնէ շունչը. կը հանէ ծոցէն, ժպտաւորեալ. . . Պերսիք, կը պահանջէ իր եպիսկոպոսական ու առաջնորդական իշխանութեան դէմ հետադարձութիւն պատժուիլը, իր մատնանշած 18 խոռվարաններուն աքսորուիլը, քահանայի թէ սարկաւազի տարազով պտրտող Տիրացուին անյապաղ քահանայ ձեռնադրուելուն համար հարկաւոր ուժը, ծծանդակութիւնը, ևն:

Տիրացու-Սարկաւազը պիտի կարգայ Աւետարանը, կատարէ վերաբերումը. Ժողովուրդը կը յուզուի նորէն. վասպուրակա՛ի արժօնի ձագ մը խորանը կը խոյանայ, ձեռքէն կ'առնէ Աւետարանը Տիրացուին, կը խոնգարուի ժամերգութիւնը, ևն:

Ու այս բոլորը հետեանք թիւնաբեր նամակի մը, զոր եպիսկոպոսը կը գրէ Գահիրէէն, Տիրացուն արածնելով կարգալ Աւետարան, ևն:

Յետոյ:

Ինչ այս կիրակի կոնդակ մը կարգային եկեղեցիին, Օրմանեան Պատրիարքին կողմէն յատկապէս բերել արուած. իմաստակութեան, կեղծիքի ու չահամուլութեան շունչովը խմբադրուած տեսակ մը հայհոյանք, եկեղեցիին օրէնքին ու ժողովուրդին հասցէին:

Վոնդակ մը, որով պիտի զբաղինք
անշուշտ:

Ահա՛ մեր քաղաքէն բաժնուիլ
չ'ոգող Գահիրէի առաջնորդին մէկ
տարուան գործունէութեան համառօտ
հաշուեկշիւը:

Ք Ր Ո Ն Ի Կ

— ԶԻԶԻՆԻԱՅԻ մէջ ամսոյս 18ին
կիրակի իրիկունը տեղի պիտի ունենայ
Մանօն օրէրային ներկայացումը, տե-
ղիս Աղբատարինամին ի նպաստ: Կար-
գադիր Յանձնախումբը կը բաղկանայ
երեք անդամներէ:

ՏԻԱՐ Զարեհ Սրբազոր, Ատենապետ,
» Միհրան Թեղեան, Ատենադպիր,
Յակոբ պէյ Բարթոյ, Գանձապետ:

Պատ. Յանձնախմբին շանքերով
արդէն գրեթէ բոլոր տոմսերը սպա-
ռած են և կը յուսանք թէ այս տա-
րեկան ներկայացումը, ինչպէս ամեն
տարի, նոյնպէս այս անգամ ալ պիտի
տայ պատկառելի հասոյթ մը:

Տիար Զարեհ Սվազորյի անխոնջ և
անձնուէր դործունէութիւնը գնահատ-
ուած է քանիցս և վեր է ամեն գա-
վեստէ:

— ՏԵՂԻՍ ԱՂՔՍՍԱՆՆՍՄԵՐ լուծ-
ուած և գործերը յանձնուած են առ-
ժամապէս Խնամակալութեան, որ իր
վերջին նիստերէն մէկուն մէջ կար-
գեց հետևեալ առժամեայ Յանձնա-
խումբը:

Տիար Յակոբ Ուղուրեան

» Ի. Լոն. Նիզամեան

» Ա. Ղազարեան:

— ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԱՐԺԷԹՈՒՂ-
ԹԵՐԸ, որոնց շուրջը շատ մը ստայող
զրոյցներ պտրտեցան, Պօղոս բաշայի
վերադարձէն ետքը, Խնամակալու-
թեան վերջին նստին մէջ որոշուեցան
ամբողջովին ծախել:

ՆՈՐԵԿ ՈՐԲԵՐԸ ներուած են եկե-
ղեցապատկան հին շէնքին մէկ մութ
անկիւնը, ճեմիչին քովը, քարերուն
վրայ:

Ուշադրութիւն...:

— ՀԱՆԳՈՒՑԵԱՆ, ՆՈՒՊԱՐ ԲԱ-
ՇԱՅԻՆ հոգեհանգստեան պատարագը
տեղի ունեցաւ ամսոյս 13ին երեքշաբ-
թի առտուն: Յովսէփ Եպիսկոպոսը պա-
տարագեց: Պօղոս բաշան բացակայ էր,
որդին Առաքել պէյը կը փոխանոր-
դէր: Ներկաներուն մէջ կը տեսնուէին.
Վսեմ. Աբրահամ բաշա Բարթոյ
» Միհրան խան Գալֆեան
» Միքայէլ պէյ Ռէիզեան
» Արթըն պէյ Ռէիզեան
» Մկրտիչ պէյ Մարկոսօֆ
Տիար Արմենակ Կամարական
» Տիգրան Կամարական
» Գառնիկ Զպուքճեան
» Անտօն Արթիմօֆ:

Եւ ուրիշներ իրենց ընտանեօք:

— Տիար Յովսէփեան Պաշտօնայեան,
Ազգ. Երկ. վարժարանին կարևոր Հո-
գաբարձուն, այս չարթուան մէջ հրա-
ժարեցան, առաջկելով իր անձնական
զբաղումները: Հրաժարեալ Հոգարար-
ձուն, իբրև փորձ ու բարի խորհրդա-
տու մը, աջ թեկն եղած է Վսեմ. Աբ-
րահամ բաշա Բարթոյին, որ, կը յու-
սանք թէ պիտի ջանայ ետ առնել տալ
անոր հրաժարականը, լաւ համոզուած
ըլլալով թէ՛ ներկայ պարագաներուն
մէջ՝ ոչ ոք պիտի համարձակէր ստանձ-
նել Հոգաբարձութեան փափուկ ու փշոտ
պաշտօնը:

— ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՇԱ. ՆՈՒՊԱՐ,
Եւրոպայէն արդէն վերադարձած, կը
գտնուի հիմայ ընտանեօք Ասուան ուր
պիտի քանի մը շաբաթ անցընէ:

Հոս սովորութիւն դարձած է ա-
մեն տարի բաշաներու վերադարձին
սպասել լուծելու համար շատ մ'ան-
կախ խնդիրներ:

Կրնանք ուրեմն յուսալ թէ Պօ-

դոս բաշային վերադարձովը նոր թուականն մը պիտի բացուի, մեր ազգային այս անկերպարան և անկայուն կացութեան վերջ մը դրուելով: Աւելորդ է աւարկել թէ Պօղոս բաշան վերջնապէս քաշուած է. հոգ չէ՛, դարձեալ թո՛ղ քաշուած ապրի, բայց, թո՛ղ Նորին Վսեմութիւնը հաճի յիշել թէ՛ ինք է որ լուծել տուաւ սահմանադրապէս ընտրուած ու վաւերացուած Թաղ. Սորհուրդը. թէ՛ ինք է որ կազմել տուաւ անկազմելի Խնամակալութիւն մը, և թէ՛ ինք է որ ի վերջոյ, զգալով իր գործած սխալը, հրաժարեցաւ, ետեւն քաշելով Տիար Գրիգոր Մելքոնեանը, իր կանչած Խնամակալը: Պէտք է ուրեմն ինք, Վսեմ. Պօղոս բաշան, փութայ լուծուած յայտարարել օրէնքով արդէն անգոյ իր ստեղծած Խնամակալութիւնը, — թէ և առանց այդ յայտարարութեան ալ լուծուած է այն սկիզբէն, լուծեալ հանգամանքը չ'ըսկըսելով իր հրաժարման, այլ 1902 Յունիս 23 ի Միթինկին մէջ ընդունուած ՈՐՈՇՄԱՆՎՈՒՄԻՆ թուականէն, — և այնուհետեւ ձեռք քաշել ազգ. գործերէ, եթէ անկեղծ է ու անդառնալի՝ Նորին Վսեմութեան հրաժարումը:

Ասանկ Խնամակալութեան մը մէջ չարունակել մնալը շիտակը շատ վարդազոյն չ'ենք գտներ Վսեմ. Աբրահամ բաշա Բարթողին համար, որ, հետզհետեւ միս մինակ կը թողուի անպաշտպանելի Առաջնորդի մը հետ, թող որ իրաւունք ալ չունինք ասկէ աւելի զօհողութիւն սպասելու Նորին Վսեմութենէն, որ կրցաւ վերջապէս ոտքի վրայ ապրեցընել մինչև հիմայ խախուտ Խնամակալութիւն մը:

— Ս. Պօղոս Պետրոսի մէջ ամսոյս Տին հինգշաբթի օրը տեղի ունեցաւ գարոցական խիստ սիրուն հանդէս մը: Փոքրիկներ արտասանեցին զանազան բանաստեղծութիւններ, Տնօրէնը խօսեցաւ հակիրճ ու պարզ ոճով եուսուֆ

Պօղոս Պէյի վրայ, պատշաճօրէն բացատրեց ամեն մէկ անհաստի պարտքերը, ընտանեկան, ազգային ու մարդկային:

Հանդէսը փայլ առաւ մանաւանդ երգերով, որոնք հիանալիօրէն երգուեցան դաշնակի ընկերակցութեամբ: Շնորհաւորելի է Օր. Նոյեմի Կարապետեանի երգած Մայր Արաքսին, ինչպէս նաև ուրիշ օրիորդի մը Ձայն տ'ըր ո՛վ ծովակիր:

Արտասանութիւնները կընդմիջուէին երբեմն Հայ Նուագախմբին ողևորիչ եղանակներովը: Իստ նշանակալից էր վերջաբանը «Հայերու թուրքով, որուն աւելի խորհրդաւոր էր այն տունը, որ կը թքնէր լեզուին վրայ այն քարոզիչներուն, որոնք չ'են քարոզեր Հայաստանին համար:

Մեր անկեղծ խնդակցութիւնները Երկ. վարժարանին ուսուցչական մարմնին ու Հայ Նուագախմբին:

— Տիգրան Երկաթ Միտրիւնը դեռ գործի չը սկսաւ. նոր յանձնախումբը դեռ չը ձեռնարկեց հանգանակութեան: Մինչև ե՛րբ վազենք շուքին ետեւէն:

— Տիար Բարսեղ Վարդուկեան, երբեմն Տեսուչ Միաց. Ընկ. Կիլիկիոյ վարժարաններուն, որ 14 տարիներէ հետէ Ամերիկա կը գտնուէր, եգիպտոս եկած է: Յարգելի հիւրը քաջ անգլիագէտ մըն է: Գանի մ'օր քաղաքս մնալէ ետք, Գահիրէ գնաց:

Թո՛ղ երիտասարդութիւնը դիտնայ օգտուիլ ներկայութենէն այսպիսի փորձ ու հմուտ ուսուցչի մը, որ մտադիր է մասնաւոր դասեր աւանդել անգլիերէնի:

— ՊԱԼԳԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ. Լամբսօրժ կոմսը Վիլենայէ Ս. Բերքուպուրի մեկնեցաւ ամսոյս 1 ին. Գեռ չը մեկնած երկրորդ տեսակցութիւն մ'ալ ունեցաւ Կոլուխովսկի կոմսին հետ, երկար ժամերով: Վերուած է Սալ-

քանին ուղղել խիստ ազդու ոճով խըմբաբուսած ծանուցագիր մը, որ պիտի պարունակէ գործադրելի վերանորոգումներու մանրամասնութիւնները:

Սակայն, կ'ըսեն թէ Աւստրիան պիտի չը մասնակցի, այլ Ռուսիան ազատ պիտի թողու գործել նեոտական միջոցներով, եթէ Գուռը չ'ուզէ ակամեջ կախել:

Վիեննայի դիւանագիտական քրջանակներուն մէջ մեծ մտահոգութիւն մը կը տեսնուի եւ ընդհանրապէս սերութեանց կողմէն անմիջական գործողութիւն մը կը բաղաւորուի չեզոքացնելու համար բարձրագոյն յեղափոխիչ գոյիքներուն, որոնց յարողներուն թիւը կ'աւելնայ օրէ օր, եւ որոնք, եթէ ազատ թողուին, երեք ամիս չ'անցած պիտի եւրոպան դէմ առ դէմ դնեն կացութեան մը, որուն անկարելի պիտի ըլլայ գտնել ազդու դարման մը, եւ որ պիտի ետեւէն ձգէ ընդհանուր պատերազմ մը:

Կ. Պոլսոյ զինուորական բարձր շրջանակներուն մէջ կը խօսուի արդէն թէ գարնան անխուսափելի է պատերազմը: Ռուսիան ու Աւստրիան ամենամեծ դաւադրութեամբ միացած կը գործեն թուրքիոյ դէմ: Լամստորֆ կոմսին պաշտօնն էր պարզապէս ուղղութիւն մը գծել Սլաւ Պետութեանց, որոնք պիտի միահաղոյն յարձակին թուրքիոյ վրայ:

Այս միացեալ պետութեանց բոլոր գնդերը կը կազմեն 300000 զօրքերու խոշոր թիւ մը: մինչդեռ թուրք զօրագնդերը, եւրոպային ու Ասիային սահմանադրուիները հակելու ստիպուած, քիչ թէ շատ ցանցնուած են ամեն կողմ: Եթէ, առաջին ընդհարումով մը, պալքանեան պետութիւնները յաղթութիւն մը տանին, Ռուսիան իր գնդերը պիտի բերէ Կ. Պոլիս ու պիտի ինք հրամայէ իրեն նաստաւոր պայմանները: Այն ատեն փոքրիկ պետու-

թիւնները պիտի զգան թէ իրենք շագանակները կրակէն հանելու ծառայած են միայն:

Այս է թուրք դիւանագիտութեան կարծիքը:

Իսկ Սուլթանը միշտ անողորբելի է. բացէ ի բաց կը յայտարարէ թէ պատերազմ պիտի ընէ ու պիտի երբէք չ'ընդունի Մակեդոնիոյ մէջ գործադրել տալ իրմէ պահանջուած բարենորոգումներուն մեծ մասը:

Այս պահուս գաղտնի չըջարեականներ զրկուեցան բոլոր Անատոլիի վալիներուն ու միւլիներուն, հրամայելով որ ժողովուրդն ու զօրքերը պատրաստեն մտալուստ պատերազմի մը:

Սուլթանը քովը կանչեց պատերազմական գործոց նախարարը ու ազարարեց անոր որ անմիջապէս պատրաստուի ամեն պատահականութեանց դիմագրելու: Բանակէն բարձր պաշտօնատար մը յայտարարած է թէ՛ թուրք բանակը պիտի կրնար կռուի մտնել, առաջին նշանին, առաջիկայ գարնան:

Պուլկարիան ու Սերպիան լուրի մնչիկ կը պատրաստուին պատերազմին: Պուլկար Խորհրդարանը տրամադիր է քուէարկել անմիջապէս զինուորական կարևոր վարկերը, որոնց առաջարկը մտտերս պիտի բերուի սեղանի վրայ: Իսկ Սերպիան իմաց տուած է արդէն օտար ռազմամիջերքի գործարաններուն, որ ինք 20 միլիոն ֆրանքի փամփուշտ պիտի գնէ:

— Մակեդոնիոյ համար, ինչպէս որ կը ծանուցանեն ռուս թերթերը, կատարեալ համաձայնութիւն գոյացած է արդէն Ռուսիոյ, Աւստրիոյ, Պուլկարիոյ ու Սերպիոյ միջև: Եթէ Գուռը մերժէ գործադրել պահանջուած բարենորոգումները, Ռուսիան ու Աւստրիան ձեռք պիտի առնեն գործը, միւս տերութիւնները գործակցին կամ ո՛չ: Թերթերը կ'աւելցնեն թէ խիստ կտրուկ ոճով ծանուցագիր մը պիտի տրուի Գրան: Ասիկայ պիտի ըլլայ Ռու-



սխալէն տուած վերջին ազգայնաբանութիւնը: Կը հաւատաւորնաւ թէ՛ մրանսան բացարձակապէս համաձայնած է Ռուսոյ հետ և թէ՛ արդէն խիստ ազդու ծանուցագիր մը տուած է ֆրանսական դեսպանատան գործակառարը Պ. Պարս:

ԱԶԴԵՐ

ԲԱՐԻՉԻ ՀԱՅԵՐՈՒՆ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ, ուր կը պատրաստուին զանազան արևելեան կերակուրներ, խիստ չափաւոր գիներով: Կը նորեկ ու անցորդ ճամբորդներու կը հայթայթուի ամեն կերպ զիւրուբիւն:

9. R. Buffault, 9.

près Faubourg Montmartre, Paris

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մէջիյէյի հրապարակը, Բասաժ Բրէնա Սէյֆէտտին պէյ, թիւ 50 իւնութը:

Ամեն տեսակ արևելեան կերակուրներ, և անուշեղէններ, մասնաւորաբար Տեօնէր եւ Եիջֆեպապի:

Այս ճաշարանի վարիչներն են Տեարք Կարապետ Տիրէմէճեան և Սարգիս Հիւսէյինճեան

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ զոհացողիչ և զիւրամտոյնի պայմաններով:

Փափագողները զիմեն Փիւնիկի խմբագրութեան:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉՔ

Անգլիերէն հոյակապ երկին կարեոր մասերուն ամփոփոււմը, հայերէնի թարգմանուած, դեղեցիկ հատոր մը, 157 էջերով: Հեղինակին պատկերով ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տոնայեճեան: Գինն է 3 ֆրանկ:

Գիւմել:

Mr. Donabedian

177 Godolphin Road

Shepherd's Bush

London, W.

ՏՐ. ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեաց բժիշկ

Սեսուքրիս փողոց թիւ 1

«Մար ս'Ալեքսանտրի» շպարանիկ վրայ ի. Ա. յարկը

Տողթէօր Սարգիս Բ. ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արգոյ հասարակութեան թէ՛ ինք հատատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարձանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնաւորաբար ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխալեմով կը բուժէ մանուկ արեան վերաբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարձանէ իրեն զիմով ազբատ հիւանդները: